Արձանագրություն N 3
Մոնիտորի սնման փոխարկիչ ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/158» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան

04.04.2018թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մկրտչյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Զեյնալյան /գնահատող/, Վ. Մարտիրոսյան /գնահատող/
Ժ. Բալաբանյան /բացող/, Ա. Ասոյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Գների նվազեցման բանակցություններին անցակացման մասին

(Ա. Մկրտչյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/158» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող գնային առաջարկների նվազեցման բանակցություններին «Մովսեսյան» ՍՊԸ-ն ներկայացրել է նոր գնային առաջարկ, որը չի գերազանցում գնման առարկայի նախահաշվային արժեքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Ա. Մկրտչյան)

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-18/158» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Մովսեսյան» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

3. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Մկրտչյան)

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 04.04.2018թ. հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 04.04.2018թ. ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հրավերի 6.1 հավելվածի:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Մկրտչյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 3-րդ կետում նշված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Ա. Մկրտչյան

Անդամներ՝ ..... Վ. Զեյնալյան

..... Վ. Մարտիրոսյան

..... Ժ. Բալաբանյան

..... Ա. Ասոյան

Քարտուղար՝ ..... Ա. Համբարձումյան